ՍԵՊՏԵՄԲԵՐ

Երկուշաբթի

Երևում է՝ մայրիկս իրենից շատ գոհ էր, որ անցած տարի ստիպել էր ինձ գրառումներ կատարել նախորդ հուշագրքիս մեջ, որովհետև գնացել ու նորն է գնել ինձ համար:

Հիշո՞ւմ եք, որ ասում էի՝ եթե հանկարծ մի տխմար ձեռքիս «օրագիր» տեսնի, ՀԻՇՏ չի հասկանա ինձ: Ուրեմն, հենց այդպես էլ եղավ այսօր:



(ԻՄ ԵՂԲԱՅՐ ՌՈԴՐԻԿԸ)

Քանի որ Ռոդրիկն արդեն գիտի մյուս հուշագրքիս մասին, ավելի լավ է՝ այս մեկը փակի տակ պահեմ: Մի քանի շաբաթ առաջ նա գտել էր իմ ՆԱԽՈՐԴ հուշագիրքը, ու չասեմ, թե ինչ խայտառակություն էր: Չեմ էլ ուզում անդրադառնալ ԱՅԴ պատմությանը:

Մի քանի տարի առաջ՝ իմ առաջին մրցման ժամանակ, հայրիկն ասաց, որ երբ լսեմ մեկնարկային ատրճանակի կրակոցը, պետք է ջուրը նետվեմ ու սկսեմ լողալ։

Բայց ՉԷՐ ասել, որ ատրճանակն ընդամենը դատարկ ՕԴ էր կրակելու։

Դե, ես էլ ավելի շատ անհանգստացել էի, թե փամփուշտն ուր էր ընկնելու, քան թե ինչպես էի հասնելու լողավազանի մյուս ծայրը։



Եվ երկրորդ՝ բոլորս խցկվում էինք երկու մրցագծերի մեջ, ու մեկը միշտ հետևիցս կպած էր լինում ու փորձում էր անցնել ինձ։



Մեզ միայն երկու մրցագիծ էր հասնում այն պատճառով, որ մեր լողի դասերը համընկնում էին ջրային ջազի դասերի հետ։

Հիշոն ասած, հայրիկին փորձել էի համոզել, որ թույլ տա՝ լողի փոխարեն միանամ ջրային ջազի խմբակին, բայց չէր համաձայնել։



որ դիմացը նստեմ, ասում էր, որ լողավարտիքիս կպած քլորը կվնասի նստարանը, չնայած մեքենան երևի տասնհինգ տարվա հնության է:

Իրականում Ռոդրիկի մինիվենի հետևում ոչ մի նստարան չկա, ու ես պետք է խցկվեմ երաժշտական սարքավորումների արանքում: Ամեն անգամ, երբ մեքենան արգելակում է, աղոթում եմ, որ գլուխս հանկարծ չպոկվի Ռոդրիկի հարվածային գործիքներից:



Ստիպված էի փաթաթվել զուգարանի թղթով՝ չցրտահարվեմ:



Հենց այսպես էլ անցկացրի ամառային արձակուրդիս մեծ մասը: Վիա թե ինչու եմ անհամբեր սպասում վաղը դպրոց վերադառնալուն:

Երեքշաբթի

Այսօր դպրոցում բոլորն իրենց տարօրինակ էին պահում իմ ներկայությամբ, ու սկզբում գլխի չէի ընկնում, թե ԻՆՉՆ Է ՊԱՏՃԱՌԸ:



Հինգերորդում սկսեցինք հոգու հետ խաղալ: Կսում էինք, որ անվան առաջին տառերն իրար հետ դառնում էին ՓԻՖ:



Հիմա Փիթերն ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ձեռքը չի բարձրացնում ու դարձել է հարվածային սովորող:

Մի տեսակ վատ եմ զգում այդ ՓԻՖ-ի ու դրա պատճառած հետևանքների համար, բայց երբեք առիթը բաց չեմ թողնում գլուխս գովելու, երբ այդ մասին խոսք է բացվում:

Հենց ընթրիքը վերջացնում ենք, բարձրանում է վերևի հարկի զուգարան ու մի ժամ լռվում այնտեղ: Ու այն ժամանակ է իջնում, երբ վերջացրած եմ լինում:

Բայց եթե հանկարծ բողոքեմ մայրիկին ու հայրիկին, Ռոդրիկը նույն անկապ պատճառաբանությունն է բերում.



Ինչևէ, հիմա մայրիկն ու հայրիկն ավելի շատ անհանգստացած են իմ փոքրիկ եղբայր Մենիով և չեն ուզում իմ ու Ռոդրիկի վիճաբանության արանքում հայտնվել:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark